եաց տարադրել զՀաքարիա 'ի Կիպրոս կղզին յաքսորս։

Յովհաննէս վարդապետ Զմիւռնացի, որ շրջէր 'ի կողմանս Եալովայի սակս ժողովելոյ զսահմանեալ ողորմութիւնս ազգին, ետուն բերել զնա Իշխանաւորք և եդին 'ի տեղի Հաքարիա վարդապետի իբր Փոխանորդ, և նա մեկնեցաւ 'ի Թադաւորեալ քաղաքէ 'ի սահմանեալ տեղի (1830· յ3 Մարտի)։ Առաքեաց Պօղոս Եպիսկոպոս զՅակոբ վարդապետ Զանկրցի 'ի Շամ Թարապուլուս՝ որոնել անդ զՄիթենիս Ս· Աթոռոյն, որ և նա էառ տեղեկութիւն 'ի Լիւսդրացի Յակոբայ, և դիր յանձնարարական, այլ չչահեցաւ ինչ՝ զի տիրեալ էին օտարք այնց ձիթենեաց, եւ տեղիքն անյայտ եւ կորուսեալ։

Մինչ բացան ճանապարհք ուխտաւորաց և ամ ըստ ամէ յաւելոյր թիւ նոցա, Կարապետ Պատրիարք և Ամիրայք ժողովեցան 'ի Պատրիարքարանի ('ի 10 Հոկտեմբերի), ուր զկնի բազում բանից և վիճմանց 'ի վերայ եկեալ մտից Աթոռոյն՝ սահմանեցին 'ի ժողովի անդ գրել եւ խնդրել 'ի Պօղոս Արք Եպիսկոպոսէ զի փութացուսցէ զտուսմար արդեանց եւ ծախուց Աթոռոյն ըստ ամենայն մասանց որոշ որոշ, զարդիւնս Ս· Յակոբայ, Ս· Յարութեան, արտաքին վանօրէից, Կոնդակադրամ, Նուիրակաց՝ 'ի վիճակս ժողովեալ ողորմութեանց սակս պարտուց, և ըստ գինս 'ի դանձարանէ Աթոռոյն վաճառեալ իրաց, այլովքն հանդերձ, մի առ մի օրինակեալ 'ի մայր տուսմարէ· Նոյնպէս և զծախուցն, որ ինչ տուեալ են Բդեշխին, Փաղաքապետին, Դատաւորին և այլոց, և որքան բաժնիւ պարտս վճարեալ են, և զայլ արտաքին և զներքին ծախս Աթոռոյն· զայս ամենայն գրել եւ հաստատել կնքով Պօղոս Եպիսկոպոսի և Խորհրդականաց, և առաքել 'ի ձեռն խոհեմ եւ հաւատարիմ վարդապետի ումեմն, զի կարող լիցի տալ պատասխանի հարցմանց նոցին, և լուծանել զտարակուսելի խնդիրս, ըստ այսմ առնել եւ յիւրաքանչիւր տարիս զկնի Զատկին։ Զի եթէ տղին է ասեն Աթոռն և նոքա բառնան զծանրութիւն հոգոց նորին, արժան է գիտել զարդիւնս և զծախս և զայլ ամենայն պարագայս նորին։ Որոշեցաւ նաեւ 'ի ժողովի անդ պատուիրել՝ զի այլ ևս մի առաքեսցեն Նուիրակունս յարտաքին գաւառս,